



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ  
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ  
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Մարտունի, Շահումյան 2,

Հեռ. 060-74-34-01

N 764

19 հոկտեմբերի 2020 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ  
ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Ն.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներից  
էլնելով ուղարկվում են Մարտունի համայնքի ղեկավարի կողմից 12.10.2020-16.10.2020թ.  
ընդունված որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Կատարող՝ Գ.Ոսկանյան

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ  
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 286-Ա

13 հոկտեմբերի 2020 թվական

**ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25.09.2020 ԹՎԱԿԱՆԻ «ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 72/2 ՀԱՍՑԵԻ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ 73.7 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 246-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 -րդ հոդվածի պահանջներով.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Մարտունի համայնքի ղեկավարի 25.09.2020 թվականի «Մարտունի քաղաքի երևանյան փողոց թիվ 72/2 հասցեի գույքի բաժանումից առաջացած 73.7 քմ մակերեսով գույքին նոր հասցե տրամադրելու մասին» թիվ 246-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Որոշման վերնագրի «73.7» թվերը փոփոխել «111.7» թվերով:

1.2 Որոշման 1-ին կետի «73.7» թվերը փոփոխել «111.7» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

13 հոկտեմբերի 2020 թվական  
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ  
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 287-Ա

14 հոկտեմբերի 2020 թվական

**ԳԱԳԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015թ. №596-Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 20.12.2019թ. թիվ 93 -Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Գագիկ Գասպարյանի դիմումը .

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Գագիկ Գասպարյանին տալ քաղաք Մարտունի, Երևանյան փողոց թիվ 72/2 հասցեում գոյություն ունեցող շինություն վերակառուցման և ուժեղացման շինարարության թույլտվություն :
2. Պարտավորեցնել Գագիկ Գասպարյանին Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին մուծել 50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:
3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունու համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Գասպարյանին որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ  
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 288-Ա

15 հոկտեմբերի 2020 թվական

**ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ '**

1. Մարտունի համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ քաղաքացիներին տրամադրել ֆինանսական օգնություն հետևյալ չափերով.

Հ/Հ	Ազգանուն անուն, հայրանուն	Գումարը
1.	Հակոբյան Լիանա Անդրանիկի	50000
2.	Բարսեղյան Ֆենիկ Արտուշի	25000
3.	Գևորգյան Ռուզաննա Ստեփանի	20000
4.	Ալանջանյան Ժորա Համազասպի	10000
5.	Ավագյան Սերյոժա Շմավոնի	10000
Ընդամենը՝ 115 000 ( մեկ հարյուր տասնհինգ հազար ) դրամ		

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**